

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԲԱԼԱՍՄԱՆ

Հայաստանի ազգային գրադարանի Գրատպության թանգարան

ՀԱՅ ԳՐԱՏՊՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՀՈՉԱԿՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ (AEPМ, IZI TRAVEL)

Բանալի բառեր՝ Գրատպության թանգարան, թանգարանների ռազմավարական նախաձեռնություններ, Եվրոպական գրատպության թանգարանների ասոցիացիա (AEPМ), Google Arts and Culture, izi travel, տպագրական ժառանգության ցանց, պատմամշակութային ժառանգություն, հեռախոսային աուդիոգիդ:

Keywords: the Printing museum, strategic initiatives of museums, Association of European Printing Museums (AEPМ), Google Arts and Culture, izi travel, print heritage network, historical and cultural heritage, handheld audio guide.

Գրքագիտության և հայ գրքի հանրահռչակման տեսանկյունից առանձնակի դերակատարում ունի Հայաստանի ազգային գրադարանի Գրատպության թանգարանը, որը ներկայացնում է հայ գրքի ավելի քան 510-ամյա պատմությունը:

Թանգարանների ռազմավարական նախաձեռնությունների մեջ է մտնում հայկական մշակութային ժառանգությունը միջազգային հարթակներում հանրահռչակելու հարցը: Գրատպության թանգարանի առաքելություններից մեկն էլ հայ գիրքն ու գրատպությունը միջազգային հարթակներում, մասնավորապես Google Arts and Culture [Google Arts and Culture: the Museum of Printing], Եվրոպական գրատպության թանգարանների ասոցիացիայի (AEPМ) և izi travel-ի հարթակներում հանրահռչակելն է: Այս հարթակները հնարավորություն են ընձեռում հայ տպագիր ժառանգությունն ըստ արժանվույն ներկայացնել հանրությանը: Այս հոդվածում ներկայացնելու ենք Եվրոպական գրատպության թանգարանների ասոցիացիան (AEPМ) և izi travel հարթակը:

AEPМ-Ի ԾԱԳՈՒՄԸ

2018 թվականից Գրատպության թանգարանը դարձել է Եվրոպական գրատպության թանգարանների ասոցիացիայի անդամ:

Եվրոպական գրատպության թանգարանների ասոցիացիան (AEPМ) հիմնադրվել է Գրենմանհերում (Լյուքսեմբուրգ) 2003 թվականի փետրվարին՝ Եվրոպական գրատպության թանգարանների միջև համագործակցությունը խրախուսելու և տպագիր ժառանգությունը հանրահռչակելու նպատակով՝ որպես Եվրոպական մշակութային ժառանգության կարևոր մաս: Այն ի սկզբանե ստեղծել էր «Պատմական տպագրական հմտությունների պահպանում» ծրագրի շուրջ ձևավորված ոչ ֆորմալ խումբ, որի նպատակն էր հավաքել թանգարանային ոլորտի մասնագետներին՝ պահպանելու գրատպության ավանդական հմտությունները և տեխնիկան, չնայած Եվրոպական շատ տպագրական թանգարաններ և արհեստանոցներ արդեն իսկ ունեին անհրաժեշտ գիտելիք և հմտություններ դա կատարելու համար, զգացվում էր, որ կա թանգարաններում աշխատելու համար հատուկ պատրաստված անձնակազմի պակաս:

Ակնհայտ դարձավ, որ տպագրությունն ու հարակից թանգարանները չեն գործում ամբողջության մեջ: Դրանք, բնականաբար, համագործակցում են՝ բազմաթիվ հավաքածուների և ժառանգության արհեստանոցների հետ, որոնք կարևոր դեր են խաղում ինչպես մեքենաների, այնպես էլ տպագրության հմտությունների պահպանման գործում: 2012 թվականի սեպտեմբերին AEPМ-ը որոշեց իր անդամակցությունը բացել տպագիր ժառանգության բնագավառում գործող կազմակերպությունների համար: 2014 թվականի փետրվարին AEPМ-ը պաշտոնապես բացվեց որպես շահույթ չհետապնդող միություն, որը գրանցված է Բրյուսելում: 2015 թվականի

հոկտեմբերին այն պաշտոնապես բացեց իր անդամակցությունը շահագրգիռ կազմակերպությունների և անհատների համար: Որպես թանգարանների համագործակցության լայն ցանց՝ AEPM-ի գործունեությունը կենտրոնացած է տեղեկատվության, փորձի և գիտելիքների փոխանակման, մասնագետների պատրաստման, նոր տեխնիկայի մշակման գործընթացների վրա:

AEPM-ի նպատակն է խթանել գրաֆիկական արվեստի բոլոր բնագավառներում գիտելիքների, փորձի, նախաձեռնությունների և ռեսուրսների փոխանակումը, քանի որ դրանք գործել են Յոհան Գուտենբերգի ժամանակներից մինչ օրս: Սկզբնապես հիմնադրվել է որպես եվրոպական գրատպության թանգարանների ասոցիացիա. այն աստիճանաբար ընդլայնվել է՝ ընդգրկելով տպագիր ժառանգությամբ հետաքրքրված կազմակերպությունների և անհատների լայն շրջանակ ինչպես Եվրոպայում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Անդամակցությունը բաց է գրատպության ոլորտի բոլոր թանգարանների և կազմակերպությունների համար, որոնք ակտիվորեն ներգրավված են տպագիր ժառանգության պահպանման գործում:

Այսօր կան մեծ թվով գրատպության թանգարաններ, տպարանային արհեստանոցներ, մասնավոր հավաքածուներ և գրաֆիկական արվեստի բաժիններ, որոնք պահպանում են հին մեքենաներ, փայտե և պղնձե փորագրություններ, թանաքը թղթի վրա դնելու, հարդարելու և տեղադրելու տարբեր գործիքներ:

Չնայած թանգարանները, արհեստանոցներն ու հավաքածուները ստեղծողներից յուրաքանչյուրն ունի իր մոտեցումը, բոլորն էլ ունեն ընդհանուր նպատակ՝ գրատպության և գրաֆիկական արվեստի բազմաթիվ եղանակների պահպանումը, փոխանցումը և մեկնաբանումը, որոնք նպաստել են տեղեկատվության և գիտելիքների տարածմանը և հասարակության առաջընթացին:

Ովքե՞ր կարող են անդամակցել

Եվրոպական գրատպության թանգարանների ասոցիացիան տպագրական ժառանգության ցանց է, անդամակցությունը բաց է:

Ասոցիացիան ներառում է՝

Բելգիայի, Կոլումբիայի, Էստոնիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Հունաստանի, Իտալիայի, Նիդերլանդների, Նորվեգիայի, Հյուսիսային և Հարավային Կորեաների, Իսպանիայի, Մեծ Բրիտանիայի, Շվեյցարիայի գրատպության թանգարանները, արհեստանոցները, տպարանները, գրադարանները և արխիվները, որոնք ակտիվորեն ներգրավված են տպագիր ժառանգության պահպանման և փոխանցման գործում:

AEPM-ի անդամ կազմակերպությունները նշվում են մանուշակագույնով: Սեղմելով կայքի հասցեին՝ տեսնում ենք AEPM-ի անդամների ամբողջական ցանկը, տեսակավորված՝ ըստ երկրների [Եվրոպական գրատպության թանգարանների ասոցիացիա (AEPM)]:

IZI TRAVEL

2011 թվականին Նիդերլանդներում բնակվող նորարարների մի թիվ, որի անդամները հիմնականում բաղկացած են նախկին Խորհրդային Միության քաղաքացիներից, իրենց առջև նպատակ դրեցին բոլոր ճանապարհորդներին մարդկության պատմամշակութային ժառանգությանը ավելի մոտ դարձնելու նպատակով ստեղծել գլոբալ, բաց և անվճար համակարգ աշխարհի բոլոր պատմությունները մեկ տեղ հավաքելու համար: Չնայած այն հանգամանքին, որ գաղափարը նոր չէր, դեռ ոչ ոք չէր փորձել այն իրականացնել նման գլոբալ և հավակնոտ մասշտաբով:

Գաղափարի հեղինակը Ալեքս Տուրսկին է, որը երկար տարիներ առաջնորդել է izi.travel-ը: Եվ շատերը հենց իրենից են առաջին անգամ լսել, որ կա մի անվճար հարթակ, որտեղ ցանկացած թանգարան հնարավորություն ունի ստեղծելու իր պատմությունը և տրամադրել այն այցելուին հեռախոսային աուդիոգիդի միջոցով:

Հարթակի անվանումն էլ պատահական չէր ընտրած՝ izi.travel, թեև գրելու ձևը տարբերվում է անգլերեն **հեշտ** նշանակությամբ բառից, բայց իր հնչողությամբ և իմաստով նշանակում է հենց դա՝ **հեշտ ճամփորդել**:

Հայաստանում izi.travel-ն սկսել է գործել 2013 թվականից: Նախագիծն իրականացվել է izi.travel-ի հայաստանյան ներկայացուցչի աջակցությամբ և, լինելով առաջինը Հայաստանում, առաջացրել բավականին մեծ հետաքրքրություն: Դրանից հետո բազմաթիվ թանգարաններ միացել են izi.travel հարթակին:

Քանի որ նախագիծը միջազգային է, այն շատ լայն տարածում է ստացել ամբողջ աշխարհով մեկ, հատկապես ավանդական տուրիստական երկրներում, օրինակ՝ Իտալիա, Հունաստան և այլն: Ներկայացված է ակտիվ գործող 3500 թանգարան, 12 500 աուդիոտուր, որոնք հասանելի են ամբողջ աշխարհում: Այս ուղեցույցները ներառում են վայրերի լայն շրջանակ, ներառյալ քաղաքները, թանգարանները, պատմական տեսարժան վայրերը և այլն: Հարթակը շարունակաբար ընդլայնվում է, նոր ուղեցույցները պարբերաբար ավելացվում են ինչպես մասնագետների, այնպես էլ տեղական ներդրողների կողմից: Օրական ավելանում է 50 նոր քաղաքային աուդիոտուր, շաբաթական 5-10 թանգարան: Հարթակի օգտատերերն ամսական լսում են 1.5-2 միլիոն աուդիոպատմություն: Կարելի է տեղադրել նաև վճարովի նյութեր, ստեղծել պատմություններ ավելի քան 50 լեզուներով:

Ռուսաստանը ներկայացված է ծրագրի հնարավորության ամբողջ բազմազանությամբ, կան հատուկ մանկական տուրեր/թանգարանային պատմություններ, քվեստեր, գնացքում լսելու համար նախատեսված տուրեր և այլն: Ի դեպ, Ռուսաստանի պետական (քաղաքային) մարմինները շատ հաճախ ֆինանսավորում կամ հենց պատվիրում են քաղաքային տուրեր՝ գիտակցելով, որ դա խթանում է զբոսաշրջությանը:

Այսօրվա դրությամբ ներկայացված են մի շարք թանգարաններ և զբոսատուրեր ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում:

izi.travel հարթակում Գրատպության թանգարանը հրապարակել է 21 անգլերեն և 29 ռուսերեն աուդիոպատմություն [izi.travel: the Museum of Printing]: Առաջիկայում նախատեսվում է աուդիոպատմությունները ներկայացնել նաև գերմաներենով, ֆրանսերենով և արևմտահայերենով:


Գրատպության թանգարանի վիճակագրական որոշ տվյալներ izi.travel հարթակում




Գրաֆիկական պատկեր 1

Այցելությունների վիճակագրություն


(Օգոստոսի 27-սեպտեմբերի 25)



Գրաֆիկական պատկեր 2
 Աուդիոպատմությունների լսումներն ըստ բովանդակության՝
 Աուդիո՝ 69,2 %
 Թանգարան՝ 23,1%
 Ցուցանմուշ՝ 7,7 %




Գրաֆիկական պատկեր 3
 Աուդիոպատմությունների լսումներն ըստ միացման եղանակի՝
 Հաջորդաբար՝ 38,5 %
 Անհայտ՝ 30,8 %
 Ընտրովի՝ 30,7 %




Գրաֆիկական պատկեր 4
 Աուդիոպատմությունների լսումներն ըստ լեզուների՝
 Ռուսերեն՝ 90,0 %
 Անգլերեն՝ 10,0 %



Գրաֆիկական պատկեր 5
 Աուդիոպատմությունների լսումներն ըստ երկրների՝
 ՌԴ՝ 87,4 %
 ՀՀ՝ 10,9 %
 Այլ՝ 1,7 %



Գրաֆիկական պատկեր 6
 Աուդիոպատմությունների լսումներն ըստ օգտվելու եղանակի՝
 API՝ 86,7 %
 WEB՝ 8,9 %
 ONLINE՝ 4,4 %



Գրաֆիկական պատկեր 7

Առողիոպատմությունների լսումներն ըստ օպերացիոն համակարգերի՝

Անհայտ՝ 86,4 %

Android՝ 3,7 %

IOS՝ 5,5 %

Windows՝ 2,2 %

Այլ՝ 2,2 %

Հարկ է նշել, որ յուրաքանչյուր ցուցանմուշ ունի իր QR-կոդը:

QR կոդ (անգլ.՝ Quick Response Code՝ արագ արձագանքի կոդ, կրճատ՝ *QR Code*): QR կոդը մեքենայական ընթերցվող օպտիկական պիտակ է, որը պարունակում է տեղեկություններ նրա մասին, ինչին կցված է: Գործնականում QR կոդերը հաճախ մատնանշում են կայք կամ հավելված: QR կոդերը կարող են օգտագործվել տարբեր բջջային սարքերի օպերացիոն համակարգերում: IOS 11-ով և ավելի բարձր օպերացիոն համակարգով աշխատող iPhone-ները և որոշ Android սարքեր կարող են ինքնուրույն սկանավորել QR կոդերը՝ առանց արտաքին հավելված ներբեռնելու: Տեսախցիկի հավելվածը կարող է սկանավորել և ցուցադրել QR կոդի տեսակը հղումի հետ միասին (և՛ Android-ում, և՛ iPhone-ում):

Հույս ունենք, որ այս հարթակի միջոցով հետաքրքիր և տպավորիչ կլինեն այցելությունները թանգարան. այն որպես ծառայություն ունի աճի մեծ ներուժ:

SUMMARY

The Printing Museum of the National Library of Armenia plays a special role from the point of view of bibliography and promotion of more than 510-year history of the Armenian book.

The issue of promotion of Armenian cultural heritage in international platforms is among the strategic initiatives of the museums. One of the tasks of the Printing Museum is to raise awareness of Armenian books and printing through the international platforms worldwide, in particular Google Arts and Culture, the Association of European Museums of Printing (AEPM) and Izi Travel.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Google Arts and Culture: the Museum of Printing [Electronic Resource] URL: https://artsandculture.google.com/partner/the-museum-of-printing_ 16.11.2024.
2. izi.travel: the Museum of Printing [Electronic Resource] URL: <https://izi.travel/ru/6358-muzey-knigopachataniya-nacionalnoy-biblioteki-armenii/ru> 16.11.2024.
3. Եվրոպական գրատպության թանգարանների ասոցիացիա (AEPM), [Էլեկտրոնային աղբյուր] URL: <https://www.aepm.eu/member/printing-museum-armenia/> 16.11.2024: